

ընտանիք մը որ կողոպտուած չըլլայ, չբկայ տուն մը որ չիլայ իր սիրելիներէն մի քանիները. աւերակներու դերբուկ մ'է Ատանայի հայոց քրիստոնէից թաղերը: Որդեկորոյս հայր մը, կարող չէ անգամ իր ողբացելոյն վրայ կանգնել խաչափայտը, մայր մը ի զուր կը կոչէ իւր կոյս աղջիկը, եղբայր մը հեկոտ ի զուր կը թափառի որոնելու իր հարազատները, որոնք զեղածիծաղ տարիներով ուռնացած՝ յոսեր էին իրենց գերդաստանին պայծառութեան:

Աղէխարը և սրտակէզ է լսել աղաղակն և վայերն վիրաւորուածներու և անօթիներու, կը պակասի շատերուն օրուան պատահ մը հացիկը, կը պակասի իրենց մերկութիւնը ծածկող վերարկուն, կը պակասի զիրենց պատսպարող հիւրը:

Չկայ լրագիր, որ ամէն օր չբերէ մեզ քստմեցուցիչ իրականութեան մը տխուր պատկերը: Ամէն կողմ սպառնալիք, ամէն կողմ պատուոյ և ընչից և կենաց անապահովութիւն: Վերահաս է շատ դժբաղդներու չարատանջ մահը և թշուառ կորուստը, եթէ փութկոտ նպաստներ զլացուին աղքատին, զրկեալին, աքսորեալին...

Ազնիւ տիկին մայրեր, անտաճ մը խորհեցէք ձեր սրտահատոր մատաղ մանուկները, ձեր գուլթ որ կը շոյայէք իրենց վրայ, խորհեցէք, որ այժմ այդպիսի սրուն մանուկներ կորուսեր են ձեզ նման զթոտ և ազնուախոհ մայրեր, լքուած են և մատնուած... ի սէր ձեր անուշիկներուն ողորմեցէ՛ք որբերուն...

Փափկասիրտ օրիորդներ, որ կը շնչէք Եւրոպիոյ Ամերիկայի ազատ և քաղցրաբոյր ազատութիւնը, խորհեցէք Չեզ նմանները, որ իրենց ծննդավայրին մէջ զուրկ ամէն վայելքներէ և ազատութենէ, լլկուած անարգներէ... այժմ կարօտ զգեստի և հացի՝ ողորմութիւն կ'աղաղակեն, փրկեցէք զիրենց մահու և անարգութեան ճիրաններէն...

Հայրեր և բարեգութ հայրեր, ձեր մտքի և մարմնոյն կորովով վառ պահեցէք ձեր նախնեաց խարոյկը. աւանդ, քանի՛ այդպիսի

օրհնեալ խարոյկներ շիջան, կիլիկեան սարաւանդներու և ծործորներու մէջ, դեռ կան և կը մնան ծխացող խարոյկներ հոն, ուր մեր նախնիք կը հանգչին իրենց քաջութեամբը, մի՛ թողուք որ բուրովին անհետ երթայ այդ մեր պատմութեան նշխարը: Թո՛ղ հրճուին հոն սրբազան նախնեաց աճիւններն ձեր առատածեան նուէրներով և ապագայ սերունդը օրհնէ բարբարներու յիշատակը: Երբ արևուտը Հանդէս ի տես կը դնէ Տոսթեան որբուհիները, հրաւէր կը կարգայ իւր ազնիւ ընթերցողներուն ընդունելու զօրութեան և շնորհակալութեան հաւաստիք այն ամենայն ճշմարիտ բարբարներու, որ գիտցեր են գոտակար ընել իրենց քրտանց վաստակը ազգին և մարդկութեան համար:

Մ'վ արդեօք չիտեսներ որբուհիներուն դիմագծին վրայ երախտապարտութեան շնորհը դէպի իրենց դաստիարակները և բարբարները: Նկարագրի տէր անձինք՝ երջանիկ են որ կրցեր են երջանկացնել մինչև ցօրս այս որբուհիները:

Արդ կը մնայ սրբազան պարտք մը պահպանել զատնք և ասոնց բաղդին վիճակել մեր նոր որբերը:

Ունենանք պիտի արդեօք բարբարողութիւն գրելու այս անգամ ևս նոր անմահ Չանշեաններու և Եզբան օրիորդներու քաղցր յիշատակները...

* * *

Կ Ո Չ Է Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ի Ն

Ազգերու և ժողովուրդներու զարգացման, յառաջդիմութեան ամենամեծ ազդակներէն մին՝ իգական սեռի կրթութիւնը և զարթումն է: Որչափ որ տասնեակ տարիներ առաջ վանի մէջ ուշադրութիւն դարձուած է իգական սեռի կրթութեան վրայ և հիմայ թէև մանչ ու աղջիկ հաւասար կ'ուսանին, սակայն դեռ նախապաշարուածներ շատ զօրաւոր են, դեռ շատ դժուար է վանեցի նոյն իսկ համեստ ապրուստ ունեցողի համար մտածել թէ ոչ

մի անպատուութիւն չկայ որ թոյլ տայ իր աղջկան դպրոց երթալ և վարժուհի դառնալ: Հասարակական պաշտօնները, ուսուցչութիւն ընդհանրապէս խաթրի համար, հացի խնդրի համար, մի արհեստի ծերբան մըն է և մեր վարժուհիներ կամ խեղանդամներ են որ պատեհութիւն չունին ամուսնանալու կամ այս ու այն ազգեցիկ մարդու պաշտպանեալներ են որ հացի խնդրի համար վարժուհի կը դառնան և արժանիքը երբէք նկատի առնուած չէ,

կազմուի «Սալնապատի Ս. Գրիգորի աղջկանց որբանոց», որը միակն է բազմաթիւ որբանոցներու մէջ զուտ ազգային տիպ ունեցող հաստատութիւն, զերծ օտար են հարանուանական կաշկանդումներէ, սոյն որբանոցը կառավարուած է բարեսէրներու պատահական նպատաներով, մինչև անցեալ տարի իր ուսումնական և տրնտեսական վիճակով բոլորովին առանձին էր, բայց ասկէ մօտ երկու տարի առաջ նկատելով բիւտճէի նուազութիւն են են



որչափ որ տխուր, որչափ որ արգահատելի, բայց երբ իրականութիւն է ոչ որ չ'պէտք է վիրաւորի և զգածուի. այլ ընդհակառակն պէտք է ջանայ փորձել, միջոցներ գտնելու այս միջնադարեան դրութիւնը փորձելու համար:

Բռնակալութեան տիրալի օրերուն 1896-1897ին՝ երբ շատ ընտանիքներ կը փճանային, երբ շատ օժանդներ կը քանդուէին, ընտանեկան երջանկութիւնը վայելելու բարեբէն զրկուող որբուհիները փողոցներէն, ցիխերու ու արեան շաղարիններուն մէջէն վերցուելով մի տեղ կը հաւաքուին և կը

հանգամանքները, ուսումնապէս միացեցաւ քաղաքիս «Սանդիստեան օրիորդաց վարժարանին հետ, իսկ ապրուստը և տնտեսականն նորէն առանձին: Սանդիստեանը մեր քաղաքի իգական սեռի ամենարաբժր դպրոցն է և այդ տեղի ընթերցաւարտներն են ընդհանրապէս որ կը պաշտօնավարեն մեր քաղաքի միւս դպրոցները. յաջորդ տարին որբանոցի սանուհիներէն տասնհոգի ընթերցաւարտ կը լինին և որոնք ի վիճակի պիտի լինին վարժուհի լինելու այն աստիճանով ինչ աստիճանով որ իրենց նախորդներն էին, սակայն քանի որ

թիւրքերի հիմնովին փոխուած է, միթէ մենք պէտք պիտի չ'զգա՞նք մեր իգական սեռի կրթութեան վիճակն ալ փոխել, որբանոցի սանուհիներ որոնք ընտանեկան կապերէ զատ և ուէ կաշկանդումէ հեռու են և մենամեծ յարմարութիւն ունին այդ նպատակին ծառայելու, եթէ միայն միջոցներ լինեն: Շարունակել յսկէ վերջ անցեալի կրթական աստիճանով, այդ կը լինի չըզիտնալ ազատութեան բարիքներ, անհրաժեշտ է մտածել, միջոցներ գտնել աւելի բարձր ուսում և կրթութիւն ունեցող վարժուհիները պատրաստելու:

Որբանոցի սանուհիները տրամադրելի են, միայն պէտք են մտածողներ և պարտաճանաչ բարեբարներ որ որդեգրեն, միջոց տան, նիւթական նպաստ տան և բարոյապէս բարձրացնելով սանուհիներին՝ ապագայ վարժուհիներ հասցնեն ամբողջ վասպուրականին:

Ներկայիս կոչ կրնենք Հայ հասարակութեան և անոր ուշադրութիւնը կը դարձնենք այս կենսական խնդրին վրայ, և կը փափագինք որ անհատապէս կամ խմբակցութեամբ բարերարութիւն որբանոցի սանուհիները, մայրաքաղաքներ և կրթական կեդրոններ զրկուին աւելի բարձր ուսում ստանալու և ապագայ դաստիարակչուհիներ պատրաստուելու համար: Ուրախ ենք որ այս տարի հինգ սանուհիներ զրկած ենք Պօլիս Գալֆայեան որբանոց և երկուքը Ամերիկայ, մինն իր քանի մը տարուայ բարերարի Պ. Համալեանի քով և միւսը բժիշկ Նալչաճեանի քով, որոնց խնամակալութեան կալ բարձր ուսում ստանալով պիտի վերադառնան հայրենիքը օգնական դառնալու իրենց սեռակիցներուն:

Պատեհութիւնը շատ թանկագին է և արժանի, ասպարէզ մը ուր ամէն բարի և ազնիւ զգացում ունեցող կարող է արտայայտուիլ, մենք վստահ ենք որ հայ ժողովուրդը անտես չ'ընէր, հրապարակ կ'իջնէ և փաստերով կ'ապացուցանէ որ ինք Արևելքի զարգացման կարագետն է: Որբանոցը այժմ ունի 33 սանուհիներ,

անցեալ տարուայ վաճառի տխուր զէպքեր ինչպէս ամբողջ ժողովուրդը նոյնպէս և որբանոցը քայքայման ենթարկեցին. վերջերս երբ կազմուեցան Ազգային միւս վարչական մարմինները կազմուեցաւ նաև որբանոցի հոգաբարձութիւն, որը դժբախտաբար գտաւ որբանոցը բոլորովին ինչպէս վիճակի մէջ, զուրկ նոյն իսկ մի օրուայ ապրուստէ և ճնշուած ահագին ծանր պարտքերու տակ, բայց լքանել, թողուլ, կարելի չէր, ուստի մեծ զժառութեամբ քով քովի գալով չորս հոգաբարձուներ, կազմելով իրենց թիւ չափով ալ խնամակալուհիներ խումբ մը սկսեցինք վարել գործը, պարտականութիւն մը կատարելու զգացումով. ժողովրդէն՝ անոր նուիրատուութեան անսպասարկութիւն մեծ ակնկալութիւններ ունենալով: Որբանոցը թէև ունեցած է բարեբարներ, որբախնամ խմբեր, սակայն անոնք բոլորը ներկայիս անորոշութեան վիճակի մը մէջ կը գտնուին. ուստի որպէս զի հոգաբարձութիւնս կարենայ որոշել իր ընթացքը, ներկայիս կը խնդրէ բոլոր նախկին խնամակալներէն և նոր խնամակալ լինելու փափագ ունեցողներէն, որ գրեն թէ իրենք քանի՞ որբ որդեգրել կուզեն (ամէն որբի տարեկան ծախսը 5-7 օսմ. լիրայ է, բացառիկ նուէրներ ալ կ'ընդունուին) և ո՞րքան վճարել կարող են, ե՞րբ պիտի զրկեն իրենց վճարումները, իրենց ճրջգրիտ հասցէն և իրենց բարի ցանկութիւնները և թեխաբարութիւնները որ կարող են մեր հաստատութեան հետ կապ ունենալ և օգտակար լինել:

Ներփակ լուսանկարը կը ներկայացնէ որբանոցի ներկայ կազմը իր երկու հոգաբարձուներով և երկու խնամակալուհիներով:

Հոգաբարձուքիւն Սալանպատոս

ՈՐԲԱՆՈՅԷ

Վ.Պ. Մարտ 30 1909

